ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԱՇՁԲ-20/2-Պ

ք.Երևան 17-ը հունիսի 2020թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Սարգսյանի, ով գործում է Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 21.04.2020թ.-ի թիվ 16-Ա որոշման հիման վրա, մի կողմից, և

«Մառա և դուստրեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Մ.Հուսնյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),
կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Կապալառուն Պատվիրատուի հանձնարարությամբ ստանձնում է սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված աշխատանքների (այսուհետ՝ Աշխատանքներ) կատարման պարտավորությունը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց դիմաց սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:

1.2. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

1.3. Կապալառուն երաշխավորում է, որ Աշխատանքները կատարվելու են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև սույն Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան: Կապալառուն երաշխավորում է նաև, որ երրորդ անձանց մոտ բացակայում են Կապալառուի կազմած նախագծային փաստաթղթերի հիման վրա աշխատանքներ կատարելուն խոչընդոտող կամ դրանց կատարելը սահմանափակող իրավունքներ:

1.4. Սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքները կատարվելու են սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև 2020թ-ի օգոստոսի 15-ը, եթե սույն Պայմանագրի Հավելված 1-ում առանձին տեսակի աշխատանքների կատարման համար այլ ժամկետ սահմանված չէ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ***Պատվիրատուն իրավունք ունի՝***

2.1.1. Կապալառուից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարել պատշաճ որակով, Պայմանագրով սահմանված ժամկետում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի ստանդարտներին, շինարարական նորմերին, կանոններին, սույն Պայմանագրով սահմանված բնութագրին համապատասխան,

2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից կատարվող Աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը՝ պահանջելով տրամադրել Աշխատանքների կատարման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

2.1.3. Պահանջել Կապալառուից աջակցել Պատվիրատուին Աշխատանքների կատարման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև Աշխատանքներն ընդունելիս,

2.1.4. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կապալառուին տալ Աշխատանքների կատարմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

2.1.5. Եթե կատարվել է սույն Պայմանագրում նշված Աշխատանքներին չհամապատասխանող աշխատանք, ապա Պավիրատուն իրավունք ունի,

I. Չընդունել աշխատանքները՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը սույն Պայմանագրին համապատասխանող Աշխատանքներով անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն Պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը,

II. Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքների համար վճարված գումարը, եթե Աշխատանքների համար արդեն իսկ վճարվել է և պահանջել Կապալառուից վճարելու սույն Պայմանագրով նախատեսված տուգանքը,

III. Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը,

2.1.6. Միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը.

I. Ցանկացած ժամանակ 5 (հինգ) աշխատանքային օր առաջ ծանուցելով Կապալառուին,

II. Եթե Կապալառուն խախտել է սույն Պայմանագրով սահմանված կատարման ժամկետը, և Պատվիրատուն կորցրել է Պայմանագրի կատարման նկաատմամբ հետաքրքրությունը,

III. Եթե Կապալառուն էականորեն խախտել է Պայմանագիրը,

2.1.7. Պահանջել Կապալառուից ամբողջությամբ հատուցել Աշխատանքների կատարման ընթացքում Պատվիրատուին պատճառված վնասը՝ ներառյալ բաց թողնված օգուտը,

2.1.8. Ցանկացած ձևով օգտագործել Աշխատանքի արդյունք նախագծային փաստաթղթերը, այդ թվում, բայց չսահմանափակվելով, ներկայացնել պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների հաստատմանը, օգտագործել նախագծանախահաշվային փաստաթղթերը որպես գնման հայտ համապատասխան գնումը կատարելիս և այլն:

2.2. ***Պատվիրատուն պարտավոր է՝***

2.2.1. Կապալառուին ապահովել սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր պայմաններով, այդ թվում, բայց չսահմանափակվելով, տրամադրել տեղեկատվություն այն տարածքների վերաբերյալ, որոնց վերանորոգման նպատակով կնքվել ու կատարվելու են սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքները, փաստաթղթեր, ելակետային տվյալներ, Կապալառուի ներկայացուցիչներին Պատվիրատուի տարածք մուտք գործելու հնարավորություն և այլն,

2.2.2. Քննարկել և ընդունել Պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքների արդյունքը, իսկ Աշխատանքների արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կապալառուին,

2.2.3. Աշխատանքների արդյունքն ընդունելու դեպքում սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարը,

2.2.4. Աշխատանքի արդյունքներ նախագծային փաստաթղթերը իր միջոցներով համաձայնեցնել պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ, իսկ փաստաթղթերում նշված մարմինների կողմից թերություններ հայտնաբերելու դեպքում ձեռնարկել սույն Պայմանագրի 5.2 կետով սահմանված միջոցները:

2.3. ***Կապալառուն իրավունք ունի՝***

2.3.1. Սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքների կատարման նպատակով Պատվիրատուից պահանջել ապահովել սույն Պայմանագրի 2.2.1 կետով սահմանված պայմանները,

2.3.2. Պատվիրատուից պահանջել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում ընդունել պատշաճ կատարված Աշխատանքները,

2.3.3. Պատվիրատուից պահանջել վճարել կատարված Աշխատանքների դիմաց սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:

2.4. ***Կապալառուն պարտավոր է՝***

2.4.1. Սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարելիս համաձայնեցնել և հաշվի առնել Աշխատանքների արդյունքի հետ կապված Պատվիրատուի պատկերացումները և ակնկալիքները, այնպիսի ժամկետում, որը հնարավորություն կտա սույն Պայմանագրով սահմանված ժամկետում կատարել և հանձնել Աշխատանքը, և ըստ այդմ պատրաստել սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված նախագծային առաջադրանքը, իսկ այդպիսին չլինելու դեպքում, օգտագործելով ելակետային տվյալները, պատրաստել սույն Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված նախագծային և նախագծանախահաշվարկային փաստաթղթերը,

2.4.2. Սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարել պատշաճ որակով, սույն Պայմանագրով սահմանված ժամկետում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի ստանդարտներին, շինարարական նորմերին, կանոններին, Պայմանագրով սահմանված բնութագրին համապատասխան,

2.4.3. Աշխատանքները կատարել անձամբ, սեփական ուժերով և միջոցներով: Աշխատանքների կատարմանը Կապալառուի կողմից երրորդ անձանց ներգրավելը հնարավոր է միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության հիման վրա,

2.4.4. Աջակցել Պատվիրատուին Աշխատանքների կատարման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև Աշխատանքներն ընդունելիս, սույն Պայմանագրի 2.1.2 կետով սահմանված կարգով Պատվիրատուի համապատասխան պահանջը ստանալուց 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին տրամադրել Աշխատանքների կատարման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

2.4.5. Հետևել սույն Պայմանագրի պայմանների սահմաններում Պատվիրատուի տված ողջամիտ ցուցումներին,

2.4.6. Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,
2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,
3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,
4) Պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,
5) ներկայացնել ըստ Աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

2.4.7. Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել Աշխատանքների ընդունման ընթացքում հայտնաբերված թերությունները,

2.4.8. Չտրամադրել սույն Պայմանագրով կատարված Աշխատանքների արդյունքը որևէ անձի՝ առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության,

2.4.9. Պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Աշխատանքների կատարման համար սույն Պայմանագրով սահմանված ժամկետի լրանալուց 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

3.2. Հանձնման-ընդունման ակտը Կապալառուի կողմից ներկայացվելու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կապալառուի աջակցությամբ ստուգում է կատարված աշխատանքների որակը և առարկությունների բացակայության դեպքում հաստատում է հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

3.3. Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կապալառուին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով կատարված աշխատանքի արդյունքում հայտնաբերված թերությունները: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները, ինչպես նաև Կապալառուի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

3.4. Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքները կամ չի մերժում դրանց ընդունումը, ապա Պատվիրատուն պարտավորվում է սույն

Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետի ավարտի օրը հաստատել հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրով Կապալառուի կողմից կատարման ենթակա Աշխատանքների գինը կազմում է 990 000 (ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված նախահաշվի: Աշխատանքների գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում, բայց չսահամափակվելով՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2. Պատվիրատուն կատարված Աշխատանքների դիմաց վճարում է համապատասխան հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Սույն Պայմանագրով վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կապալառուի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

4.4. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:

4.5. Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կապալառուի բանկում՝ Կապալառուն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Սույն Պայմանագրի 1.3. կետով և Հավելված 1-ով սահմանված պահանջներին չհամապատասխանող Աշխատանքներ կատարելու դեպքում Պատվիրատուն իրավասու է Կապալառուից գանձել տուգանք՝ սույն Պայմանագրի 4.1 կետով սահմանված գումարի 10 (տասը) տոկոսի չափով, ինչպես նաև պահանջել իր կրած վնասների, ներառյալ, բայց չսահմանափակվելով, խախտված իրավունքները վերականգնելու համար կատարված ծախսերի և բաց թողնված օգուտի հատուցում: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում, իսկ վնասների հատուցման պահանջը ներկայացվում է նաև Աշխատանքները սույն Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, Պատվիրատուի կողմից դրանց ընդունվելու, սակայն հետագայում կատարված Աշխատանքների արդյունքը պետական կամ տեղական կառավարման մարմինների կողմից չընդունվելու այն դեպք(եր)ում, երբ համապատասխան մարմինը որպես այդպիսի չընդունման հիմք նշում է կատարված Աշխատանքների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի ստանդարտներին, շինարարական նորմերին, կանոններին չհամապատասխանելու փաստը:

5.3. Պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքների գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4. Սույն Պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքները կատարելու արդյունքում Կապալառուին վճարման ենթակա գումարներից, իսկ Աշխատանքների արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված լինելու պարագայում՝ Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջագրով սահմանված կարգով:

5.5. Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կապալառուն Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

I. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

II. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.6. Կատարված Աշխատանքների դիմաց վճարելու սույն Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ կետանցի յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավելին, քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

5.7. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.8. Կապալառուն պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով սահմանված փաստաթղթերի անպատշաճ կազմելու համար ներառյալ այն դեպքերում, երբ նախագծային փաստաթղթերի հիման վրա ստեղծված օբյեկտի շինարարության և հետագայում դրա շահագործման ընթացքում հայտնաբերվում են թերություններ:

5.9. Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում սույն Պայմանագրով ստանձնած պարտականությունների ամբողջական կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են ջրհեղեղը, հրդեհը, երկրաշարժը, փոթորիկը, սողանքը, և բնական այլ աղետները, պայթյունը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքացիական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, համաճարակները, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6.2. Կողմը, որի մոտ ծագել է ֆորսմաժորային իրավիճակ, պետք է առաջին իսկ հնարավորության դեպքում, սակայն ոչ ուշ, քան նման իրավիճակի վրա հասնելուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ծանուցի մյուս Կողմին նման իրավիճակի առաջացման, իսկ հետագայում նաև՝ բնականոն պայմանների վերականգնման մասին, հակառակ դեպքում կզրկվի ապագայում ֆորսմաժորային իրավիճակը որպես հիմնավորում օգտագործելու իրավունքից:

6.3. Ֆորսմաժորային իրավիճակի վերաբերյալ հանդիպակաց Կողմին ծանուցում ուղարկելու պահից Կողմի համապատասխան պայմանագրային պարտավորությունների կատարման պահանջը համարվում է կասեցված մինչև Պայմանագրի կատարման համար բնականոն պայմանների վերականգնումը:

6.4. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

7.1. Սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցություններին կամ Պայմանագրի պայմաններին, այդ թվում՝ արժեքին, Պայմանագրից բխող գործողություններին առնչվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ փաստաթղթերը), բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), գաղտնի է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ

կողմի, բացառությամբ մյուս Կողմի նախապես տրամադրված գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.2. Կողմերը պարտավոր են սույն Պայմանագրի գործողության, ինչպես նաև հաջորդող 3 (երեք) տարիների ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը՝ գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրեին իրենց իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով, պատշաճ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև սույն Պայմանագրով սահմանված բնութագրին համապատասխան կատարումը:

8.2. Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

8.3. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

8.4. Սույն Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց Կողմերի նախնական գրավոր համաձայնության:

8.5. Սույն Պայմանագրի Հավելված 1-ը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

8.6. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.7. Սույն Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

8.8. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

8.9. Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

8.10. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8.11. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ: Կողմերը գիտակցում և ընդունում են, որ սույն Պայմանագրի կնքման պահին Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից որպես պանդեմիա որակված կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությունը չի խոչընդոտում Պայմանագրով սահմանված պարտավորությունների բարեխիղճ և ժամանակին կատարմանը, ուստի, Կողմերը զրկվում են հետագայում Պայմանագրով սահմանված պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում որպես հիմք Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությունը վկայակոչելու իրավունքից:

8.12. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.13. Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

8.14. Կողմերն արձանագրում են, որ սույն Պայմանագրի կնքման պահին Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից որպես պանդեմիա որակված կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում հայտարարված է արտակարգ դրություն, իսկ պարետի որոշումներով Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվում են արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված սահմանափակումներ, ինչից ելնելով, Կողմերը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավական հնարավորությունից, սույն Պայմանագիրը կնքում են Պայմանագրի ստորագրված օրինակների լուսապատճեններն էլեկտրոնային փոստով փոխանակելու միջոցով:

8.15. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Ա.Սարգսյան
Գործադիր տնօրենի ժ/պ

Կապալառու

«Մառա և դուստրեր» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Փ.Բուզանդ 1/3
ՀՎՀՀ՝ 02700688
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247010030911000

Մ.Հուսնյան
Տնօրեն

Հավելված 1
2020թ-ի հունիսի 17-ին կնքված
N ՀՀՀ-ՄԱԱՇՁԲ-20/2-Պ պայմանագրի

ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ և ԱՐԺԵՔԸ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Բնութագիրը	Աշխատանքների կատարման վերջնաժամկետը	Արժեքը ՀՀ դրամ
1)	Էսքիզային և նախագծային փաստաթղթերի կազմում՝	Պատվիրատուին պատկանող շինություններից «Գլխավոր մասնաշենք»-ի արտաքին սանդուղքների վերակառուցում, վերանորոգում և «Երևան ստուդիա» մասնաշենքին կից եռահարկ աստիճանավանդակի կառուցում, չվերանորոգված հատվածների ընթացիկ վերանորոգման աշխատանքների էսքիզային և նախագծային փաստաթղթերի կազմում՝ ի փոփոխումն 09.09.2015թ. տրված N 01/18-07/2-45613-512 ճարտարապետահատակագծային առաջադրանքի և 16.02.2016թ. N 01/18-05/1-Ս-681-64 նախագծերի:	20.07.2020թ.	540000
2)	Նախագծա-Նախահաշվային փաստաթղթերի կազմում	Պատվիրատուին պատկանող տարածքի հենապատի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում	15.08.2020թ.	150000
3)	Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում	Պատվիրատուին պատկանող շինություններից «Ֆիլմադարան» մասնաշենքի մի հատվածի (մոտ 130ք.մ. մակերեսով) ընթացիկ վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում	15.08.2020թ	300000
Ընդհանուր արժեքը				**990000**

Պատվիրատու

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Ա.Սարգսյան
Գործադիր տնօրենի ժ/պ

Կապալառու

«Մառա և դուստրեր» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Փ.Բուզանդ 1/3
ՀՎՀՀ՝ 02700688
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247010030911000

Մ.Հուսնյան
Տնօրեն